Հավելված
«Ինտերնետ հասարակության Հայաստան հատված»
հասարակական կազմակերպության խորհրդի 2019
թվականի դեկտեմբերի 4-ի N 3Լ որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական
կազմակերպության 2019 թվականի գործունեության

1. «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ **Կազմակերպություն**) իր մասնակցությունն է ունեցել Chapterthon 2019 «Միացնել չմիացածներին» ծրագրին՝ համապատասխան դրամաշնորհ ստանալով «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպության („Internet Society„ non-profit organization) կողմից: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) Հրազդան քաղաքի թոշակառուների զբաղվածության ակումբ - տեղադրվել է երեք համակարգիչ և Wi-Fi երթուղիչ՝ լայնաշերտ ինտերնետ կապով: Անցկացվել է ինտերնետ գրագիտության դասընթաց: Արդյունքում, 108 նոր օգտվողներ մուտք են ունեցել ինտերնետ,

2) Աշտարակի քաղաքային թիվ 2 դպրոց - տեղադրվել են լրացուցիչ համակարգիչներ, որը հնարավորություն է տվել ևս 15 դպրոցականի ունենալ ինտերնետ հասանելիություն,

3) Երևանի «Auxilium AM» բարեգործական հիմնադրամ - տրամադրվել է երկու համակարգիչ՝ հաշմանդամ երիտասարդներին առցանց ուսուցման համար: Դասընթացն անցնելուց հետո համակարգիչը կտրամադրի հերթում գտնվող հաջորդ մարդուն,

4) Վազաշեն գյուղի դպրոց - տեղադրվել է երեք համակարգիչ և լայնաշերտ ինտերնետ կապով Wi-Fi երթուղիչ: Լայնաշերտ երթուղիչը և համակարգիչները թույլ տվեցին ավելացնել ինտերնետի օգտագործողների քանակը ևս 105-ով,

5) Խաչիկ գյուղի դպրոց - տեղադրվել է երկու համակարգիչ և լայնաշերտ ինտերնետ կապ ունեցող Wi-Fi երթուղիչ, որ ոնք 50-ով ավելացրել են ինտերնետ օգտագործողների քանակը,

6) Հրազդան քաղաքապետարանի մշակութային կենտրոն - տեղադրվել է համակարգիչ և լայնաշերտ ինտերնետ կապ,

7) համակարգիչ է տրամադրվել Ամերիկյան համալսարանի շրջանավարտ , մագիստրոսի կոչում ունեցող հաշմանդամ կնոջը, ով օգնում է հասարակական կազմակերպություններին ծրագրերի կառավարման հարցերում,

8) Հրազդան քաղաքի գրադարաններ - տեղադրվել են Wi-Fi երթուղիչներ, որոնք անվճար ինտերնետ են տրամադրում բոլոր սմարթֆոն ունեցող գրադարանի այցելուներին: Գրադարանների ցանկը հետևյալն է՝ Հրազդան քաղաքի N 1, N 2, N 3 N 4, N 5 գրադարաններ, ինչպես նաև Կոտայքի մարզային գրադարանը, Սոլակ, Նոր Երզնկա, Քաղսի, Զովունի գյուղերի գրադարանները, Շիրակի պետական գրադարանը:

2. «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությունը շարունակել է «Համակարգիչներ, ծառայություններ և Wi-Fi ինտերնետ գյուղական դպրոցների և գրադարանների համար» ծրագիրը, որի շրջանակներում, գրադարանային կառավարման ծրագրով, համակարգիչներ են տրամադրվել Գեղարքունիքի մարզի Չկալովկա, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Վարսեր, Նորաշեն գյուղերի գրադարաններին, Կոտայքի մարզի Լեռնանիստ, Մարմարիկ, Մեղրաձոր, Զովունի գյուղերի գրադարաններին, Հրազդան քաղաքի թիվ 5, թիվ 7 գրադարաններին, Հրազդանի հեռուստատեսության գրադարանին, Տավուշի մարզի Ազատամուտ, Ոսկեվան, Չինարի գյուղերի գրադարաններին, Դիլիջան քաղաքի թիվ 2, թիվ 3 գրադարաններին, Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի գրադարանին: Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի գրադարանում փոխվել է մայրական տպասալիկը (intel core I5):

3. «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպության կողմից մշակվել է «Ինտերնետի, սոցիալ ցանցերի գրագիտություն և փոքր բիզնեսի հիմնելու հմտություն խոցելի խմբերի համար» ծրագրի նախագիծը, որը ներկայացվել է «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպության („Internet Society„ non-profit organization) դրամաշնորհների մրցույթին և արժանացել հավանության:

Գոյություն ունեն հետևյալ թիրախային խմբերը, որոնք գտնվում են «Ինտերնետ հասարակության Հայաստան հատվածի» ՀԿ-ի ուշադրության ներքո՝ հաշմանդամություն ունեցող անձինք, թոշակառուներ, թոշակառու մարզիկներ, դպրոցների երիտասարդ շրջանավարտներ, ովքեր չունեն մասնագիտություն և աշխատանք: Ծրագրի շրջանակներում ընտրվելու և վերապատրաստվելու են 45 անձինք (առաջին երեք թիրախային խմբերից՝ 10 հոգի և 15 երիտասարդ

անաշխատունակ դպրոցների շրջանավարտներ): Ընտրության չափանիշները կլինեն իրենց պատրաստակամությունը սեփական բիզնեսն սկսելու և որոշ գաղափարներ ունենալու մասին, թե ինչպես է շուկան գործում: Համացանցային գրագիտությունը կներառի ինտերնետի կառուցվածքը, տիրույթները (ընդհանուր և երկրի կոդերը), վեբ-կայքերի դերը, էլեկտրոնային առևտուրը և անվտանգությունը: Համակարգչային դասընթացներից հետո դասընթացի մասնակիցները կսկսեն իրենց դասընթացների նոր փուլը՝ բիզնեսի դասընթացները, որոնք տրամադրվում են Բիզնեսի աջակցության կենտրոնի (BSC) կողմից: Այս դասընթացների տևողությունը կկազմի մեկ ամիս: Այս դասընթացների ավարտից հետո մասնակիցները կկարողանան գրել իրենց բիզնես նախագծերը (առաջարկությունները): Կստեղծվեն 5 խմբեր՝ իրենց փոքր բիզնեսը սկսելու առաջարկների մշակման համար: Խմբերում ընդգրկվելու են յուրաքանչյուր թիրախային խմբի մարդիկ: Այս խմբերը կղեկավարվեն (կուղղորդվեն) բիզնես պլանի մշակման փորձագետների կողմից: Կկատարվի շուկայի ուսումնասիրություն՝ պարզելու, թե որքանով են հաջողված բիզնես նախագծերը: Դասընթացից հետո տեղի կունենա բիզնես առաջարկների ներկայացում: Բիզնես առաջարկների գնահատումը կկատարվի դրանց ծախսարդյունավետության, կայունության, ապագա հեռանկարների և ծրագրերի ընդհանուր առավելությունների հիման վրա:
Ամենահեռանկարային բիզնես պլանների ընտրությունից հետո կգրանցվեն սկսնակ ձեռնարկությունները: Մասնակիցները, որոնց բիզնես պլանները փորձաքննական հանձնաժողովի կողմից չեն արժանանա հավանության, կմիանան հաջողակ խմբերին: Աշխատակիցների մեծ մասը սկզբնական շրջանում կաշխատեն կամավոր հիմունքներով՝ մինչև որ նորաստեղծ ձեռնարկությունները կսկսեն զումար վաստակել:
Այս դասընթացների արդյունքում, «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ն կունենա 45 լավ պատրաստված ստարտափերի խումբ, որոնք կկարողանան իրականացնել ցանկացած բիզնես գաղափար:

4. «RINArmenia» կազմակերպության հետ համատեղ Կազմակերպությունը մշակել է նոր ծրագիր և դիմել «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպության („Internet Society„ non-profit organization) դրամաշնորհի, որը բավարարվել է: Ծրագիրը նախատեսում է կազմակերպել դասընթացներ «RINA-ի Ապագա Ինտերնետի ներածություն» թեմայով: RINA-ն (Recursive Inter Network Architecture) ցանցի նոր ճարտարապետություն է՝ նախագծված գերակատարելու համացանցը արագության, անվտանգության և կատարողականության առումով: Այն մոտ 10 տարի գոյություն ունեցող հետազոտական ծրագիր է՝ ստեղծված ներկայիս համացանցի

համահիմնադիրներ՝ Ջոն Դեյի, Լուի Պուզենի և այլ մասնագետների կողմից։ «RINArmenia» ծրագրի նպատակն է զարգացնել և կիրառության մեջ դնել ապագայի համացանցի նոր մոդելը՝ RINA տեխնոլոգիան տարբեր ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետությունը դարձնելով առաջին փորձագիտական կենտրոնը, որը կզարգացնի և կկիրառի RINA տեխնոլոգիան ամբողջ երկրի մասշտաբով։

5. Կազմակերպությունը «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել է 2019 թվականի Ինտերնետ Կառավարման համաժողովը՝ «ArmIGF 2019», երիտասարդների Ինտերնետ Կառավարման համաժողովը, «.am» դոմենային անունների տիրույթ 25-ամյակին նվիրված տոնակատարությունը։

6. Կազմակերպությունը մշակվել է նոր ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության գյուղական գրադարանները համակարգիչներով և գրադարանների կառավարման ծրագրով համալրելու համար։ Այդ ծրագիրը ֆինանսավորելու համար Կազմակերպությունը դիմել է Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի դեսպանություն՝ դրամաշնորհ ստանալու համար։

7. 2019 թվականին Կազմակերպության անդամները մասնակցել են մի շարք հանդիպումներում։ Այսպես, Կազմակերպության խորհրդի անդամներ՝ Անի Դալլաքյանը և Կարեն Երզնկանյանը մայիսի 9-10-ը Բուխարեստ քաղաքում մասնակցել են «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպության եվրոպական մասնաճյուղերի (chapter) 2019 թվականի համաժողովին, իսկ Կազմակերպության հիմնադիր անդամ Վալերի Ստեփանյանը և Կազմակերպության նախագահ Իգոր Մկրտումյանը նոյեմբերի 14-15-ը Թբիլիսի քաղաքում մասնակցել են «Համայնքային ցանցեր»-ի գագաթնաժողովին։

8. Կազմակերպությունը մի շարք կոնֆերանսներում ներկայացրել է շնորհանդեսներ՝

1) Իգոր Մկրտումյան, Chapterthon 2019 Հայաստան հատվածի ծրագիր, «ArmIGF 2019» համաժողով,

2) Անի Դալլաքյան, Armenia Chapter's plans, implemented and upcoming projects, Բուխարեստ, «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպության եվրոպական մասնաճյուղերի (chapter) 2019 թվականի համաժողով,

3) Վահան Միսակյան, Հայաստանի գյուղական գրադարաններ ծրագիր, «Նորարար գրադարաններ 2019» աշխատաժողով։

9. Կազմակերպությունը մասնակցել են հետևյալ վեբինարներին՝

1) Community Webinar on PIR/Ethos Capital/Internet Society,

2) InterCommunity 2019: A Global Discussion on Community Networks,

3) Performance Evaluation Criteria for ISOC Chapters,

4) How to Prepare a Successful Video for the Chapterthon 2019 project,

5) Q2 European Chapters Call - Encryption and the Internet and the update from Chapter Advisory Council Steering Committee,

6) Internet Society Community on-line Call for 2020 Action Plan Development process.